Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի N842 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 2-ի N461-Ա – N462-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 5-ի N463-Ա - N465-Ա, 2022 թվականի օգոստոսի 6-ի N466-Ա- N468-Ա, որոշումների վերաբերյալ.

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները.

1. N466-Ա, N467-Ա և N468-Ա որոշումների ընդունման ամիսը սխալ է գրառված:

1. N466-Ա, N467-Ա և N468-Ա որոշումների հղումները անհրաժեշտ է կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներին, բացի այդ որոշումներով տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթի պահանջին:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Ռ. Գրիգորյան
6 հոկտեմբերի 2022թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի N842 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 5-ի N463-Ա որոշման վերաբերյալ.

Թիվ 463-Ա որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի նկատմամբ աճուրդ վաճառքներ կայացնելու վերաբերյալ հրապարակային ծանուցման համար հայտարարություն հրապարակելու մասին»:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարողի 2022 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 465-Ա որոշման վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

26.09.2022թ.
Կատարող՝ Ա. Հարությունյան